Արձանագրություն N 4

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/9 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար լուսանկարչական սարքի և համակարգչի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10 նոյեմբերի 2025 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սևան Գևորգյանը, անդամներ՝ Ալֆրեդ Մանվելյանը, Հակոբ Վարդանյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/9 ծածկագրով գնման ընթացակարգի հատերի գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Սևան Գևորգյանը նիստը հայտարարեց բացված:

Հանձնաժողովը պարզեց, որ 1-ին չափաբաժնի մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից «ՎԱԼՍԱ» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից «ԳՐԵԳԱՐՏ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Իրականացված գնահատման արդյունքում «ՎԱԼՍԱ», «ԳՐԵԳԱՐՏ ՍԻՍՏԵՄՍ» և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ների հայտերը գնահատվեցին բավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց՝

- «ՎԱԼՍԱ» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից՝ 1-ին չափաբաժնի մասով:
- «ԳՐԵԳԱՐՏ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից՝ 2-րդ չափաբաժնի մասով:
- «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից՝ 3-րդ չափաբաժնի մասով:
- հրավերով սահմանված անգործության ժամկետը լրանալուց հետո «ՎԱԼՍԱ», «ԳՐԵԳԱՐՏ ՍԻՍՏԵՄՍ» և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ պահանջելով ներկայացնելու որակավորման և պայմանագրերի ապահովումները՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

ղեկավար _____ Սևան Գևորգյան

անդամներ _____ Ալֆրեդ Մանվելյան

_____ Հակոբ Վարդանյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան